ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 334–Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՂԻՆԱԿԻ ԱԶԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1-րդ, 37.2-րդ, 37.3-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 26-ի՝ ՀՀ Տավուշի մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 483 արձանագրությունը, եզրակացությունը և Ռուզաննա Ազարյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Ռուզաննա Վաղինակի Ազարյանին 2025 թվականի դեկտեմբերի 17-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Զորականի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով մեկ տարի փորձաշրջանով:

2. Ռուզաննա Վաղինակի Ազարյանի փորձաշրջանի համակարգող նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Ն.Կ.Աղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նառա Պապյանին:

3. Ռուզաննա Ազարյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

4. «ՀՀ Տավուշի մարզի Զորականի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռուզաննա Ազարյանի փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ Տավուշի

մարզի Զորականի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանը ներկայացնել ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի 1 տարվա կատարողական հաշվետվությունը:

5. Փորձաշրջանի ղեկավար Նառա Պապյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-12-17 10:34:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. դեկտեմբերի 17
ք.Իջևան